

Թիւ 1910
Փետրուար 16, 1961

Արժանաշնորհ

Տ. Վրթանէս Աւագ ՔՇՆՅ. Փափազնան
Այցելու Հովիւ եւ նախագահ Սխական Խորհուրդի
Ս. Թարութիւն Եկեղեցւայ
Ս. Միլվոքի.

Սիրելի Տէր Հայր,

Ստացած ենց 1960, Դեկտեմբեր 19 թուակիր Զեր տեղեկագիրը,
որով կը Հաղորդէց թէ Զեր նախագահութեամբ՝ Դեկտեմբեր 11ին գու-
մարուած Սխական ժողովը կատարած է Սխական Խորհուրդի մասնակի
ընտրութիւն, եւ Ներկայացնելով ժուկարկութեան արդիւնքը, կը
խնդրէց ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Զեր Սխական ժողովը տեղի ունեցած է
Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց Համաձայն, եւ ընտրուած
անձերը, իրքեւ Եկեղեցւոյդ նախանձարնդիր ու նուիրեալ անդամներ,
կը վայելեն Զեր Համայնքի ժողովուրդին վատահութիւնը, այսու կը
վաւերացնենց անոնց ընտրութիւնը, ըստ Հետեւեալին.-

Տիարք՝ Գարքիէ Ղարքիէ Լեան
Նազար Պալեան
Մեսրոպ Աէշեան

Օրհնելով Նորընտիր անդամները՝ կը մաղթենց Զեզի եւ պատ-
ռարժան Սխական Խորհուրդիդ յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն,
ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն Համայնքիդ մեր սի-
րեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

Սի՛ն ԱՐԱԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի